

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակներս նկատվել էր Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Վեցերորդի առողջական վիճակի վատացում:

Հրավիրված կոնսիլիումը գտավ.

Ստամոքսի չարորակ ուռուցք, սրտի և կորոնար (պսակաձև) անոթների ուժեղ արտահայտված սկլերոզ (կարծրացում)՝ արյան շրջանառության խանգարմամբ, թոքերի էմֆիզեմա (թոքաբշտիկների լայնացում) և պնևմոսկլերոզ (թոքային հյուսվածքի սկլերոզ):

Դիագնոզի որոշման (ախտաճանաչման) պահից սկսած պարբերաբար հրավիրվում են կոնսիլիումներ, մասնակցությամբ ռեսպուբլիկայի խոշորագույն մասնագետներ՝

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ. Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆի,

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ. Ռ. Հ. ՅՈԼՅԱՆի,

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ. Վ. Հ. ՖԱՆԱՐՋՅԱՆի,

Գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ. Տ. Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆի,

Դոկտ.-պրոֆ. Ս. Ս. ՇԱՐԻՄԱՆՅԱՆի,

Դոկտ.-պրոֆ. Ա. Տ. ՍԻՄՈՆՅԱՆի,

Դոցենտ՝ Ա. Ա. ՔԱԹԱՆՅԱՆի:

Միաժամանակ հրավիրված էին խոշորագույն մասնագետներ նաև Մոսկվայից և Խարկովից՝

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, դոկտ.-պրոֆ. Բ. Վ. ՎՈԳՆԵՎ,

Ավագ գիտական աշխատող, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ Ի. Ֆ. ՋԵՌՆԻՑԿԻ:

Ապրիլի լույս 23-ին հիվանդի մոտ նկատվել է սրտանոթային սիստեմի գործունեության ուժեղ անկում (կոլապս)՝ լրիվ առիթմիայով (զարկերակի անկանոնությամբ) և արյան ճնշման ուժեղ իջեցմամբ:

Շնորհիվ ձեռ առնված միջոցների, հիվանդը դուրս է բերված կոլապսից, սակայն նրա դրությունը շարունակում էր մնալ ծանր:

Ապրիլի 27-ից մինչև մայիսի 6-ը սրտանոթային սիստեմի գործունեության անբավարարությունը շարունակում է աճել. առաջանում են այտուցներ: Ստամոքսի նշված շարորակ ուռուցքը աճում է հարաճուն արագությամբ:

Հիվանդի ընդհանուր դրությունը վատանում է. շարունակվում է լրիվ առիթմիան, զարկերակի թուլացումը, շնչառությունը արագացած է (30 մեկ րոպեում), արյան ճնշումը ցածր է: Գիտակցությունը պահպանված է:

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստր՝ Ա. Ի. ԽՐԻՄԼՅԱՆ

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության շտաբի վարչության պետ՝ Վ. Ա. ՄՈՒՎՅԱՆ

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Ռ. Հ. ՅՈԼՅԱՆ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Վ. Հ. ՖԱՆԱՐՋՅԱՆ

Գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Տ. Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Դոկտ.-պրոֆ.՝ Ս. Ս. ՇԱՐԻՄԱՆՅԱՆ

Դոկտ.-պրոֆ.՝ Ա. Տ. ՍԻՄՈՆՅԱՆ

Դոցենտ՝ Ա. Ա. ՔԱԹԱՆՅԱՆ

Պոլիկլինիկայի գլխավոր բժիշկ՝ Ի. Ռ. ՂԱՐԻԲՅԱՆ

Բոլոր կոնսիլիումներին ներկա են եղել՝

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ՝ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆը,

Գերագույն Հոգևոր խորհրդի նախագահող անդամ՝
գերաշնորհ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆը,
հոգեշնորհ Տ. ԳԵՈՐԳ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԹՅԱՆը:

6 մայիսի 1954 թ.